

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ՎԱՂԱՐՇԱԿ ՔՈՍՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՅԱԳԵՏԸ

Լրացավ հայ լեզվաբանության և քերականագիտության նվիրյալ Վ.Ա. Քոսյանի ծննդյան 80-րդ տարին, թեև անցել է մեկուկես տասնամյակ, որ նա ավարտել է իր երկրային կյանքը: Իսկ նրա թողած գիտական ժառանգությունը, իբրև հայերենագիտությանն ամբողջովին ծառայելու վկայություն, դեռ երկար պիտի մնա հետագա մասնագետների ուսումնասիրության առարկա և օրինակ նման աշխատությունների ստեղծման համար:

Վ. Ա. Քոսյանը ծնվել է Շիրակի հայտնի գյուղերից մեկում՝ Մեծ Պարնիում, որը հայտնի է նաև իր անվանի մարդկանցով, ճանաչված գիտնականներով: Վ. Քոսյանն եղավ նրանցից մեկը, որ հետպատերազմյան դժվարին տարիներին կրթություն է ստանում հայկական մանկավարժական բուհում, այնուհետև անցնում է գիտության դժվարին ճանապարհով և իբրև գիտնական մանկավարժ՝ իր գիտակցական ողջ գործունեությամբ գրեթե անմնացորդ նվիրվում այնքան հարկավոր կադրերի պատրաստման գործին:

Թեև տասնամյակներ են անցել, սակայն մեր հիշողության մեջ դեռևս մնում են մեր սիրելի ուսուցչի դասախոսություններից ստացած տպավորությունները: 1950-ական թթ. սկզբներին Վ. Քոսյանն արդեն ուներ ճանաչված դասախոսի համբավ: Ինձ բախտ է վիճակվել նաև լինելու մանկավարժական համալսարանի նույն ամբիոնի աշխատակիցը, ուր դասավանդում էր անվանի պրոֆեսորը, հետագայում նաև ղեկավարում նույն ամբիոնը:

Սենք ականատես եմք եղել գրեթե այն ամենին, որ անվանի գիտնականը դարձավ գիտության դոկտոր, այլև պրոֆեսոր, պաշտոնավարեց ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետում, միառժամանակ աշխատեց ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ իբրև փոխտնօրեն, այնուհետև ընտրվեց հիշյալ ֆակուլտետի ղեկան, վերջում հայոց լեզվի ամբիոնի վարիչ:

Եվ այս ամբողջ ընթացքում Վ. Քոսյանն աշխատում էր մեծ եռանդով ու պարտականությունների հստակ իրականացմամբ՝ երիտասարդներիս օրինակ տալով, առաջացնելով իր անձի հանդեպ սեր և ակնածանք: Եվ այդ ամբողջ ընթացքում բանասիրական և լեզվաբանական անմնացորդ նվիրումով, ինքնատիպ եռանդով և հմտությամբ նա ուսումնասիրում է հայոց լեզվի մի այնպիսի բնագավառ, որպիսին բառակապակցության ուսմունքն է՝ առնված տեսական քննարկման և կոնկրետ դրսևորումների՝ հայերենի հին, միջին և նոր փուլերի հարաբերությամբ:

Ջարմանալին այն էր, որ պրոֆ. Վ. Քոսյանը նշված պատասխանատու պաշտոններում աշխատելիս նույնքան ակտիվությամբ շարունակում էր կատարել գիտական լուրջ և ծանր հետազոտական աշխատանք. նրա գրասեղանին, նույնիսկ բազմոցներին, աթոռներին մշտապես կարելի էր տեսնել տարաբնույթ գրքեր, ձեռագիր թղթեր, որոնցից կամ փաստեր էր կուտակում, կամ որոնք գրվելիք նոր աշխատության սևագիր, նախնական շարադրանք էին: Նա պարապ ժամանակ չուներ, ուղղակի տքնաջան գիտնականի փայլուն օրինակ էր:

Վ. Քոսյանը բազմահմուտ լեզվաբան էր, նրա աշխատություններն ընդգրկում են շարահյուսական երևույթների վերլուծության լայն շրջանակ, իսկ լուրաքանչյուր հարցի քննարկում իրականացվում է ընդհանուր լեզվաբանության, ռուս և հայ բերականական մտքի արժեքավոր ձեռքբերումների հստակ գնահատությամբ և ըստ անհրաժեշտության գործադրմամբ: Գտնվելով դասական հայերենագիտության դիրքերում, շարունակելով իր մեծ նախորդների, ընդ որում անմիջական ուսուցիչների ստեղծած ավանդն այդ բնագավառում անվանի հայերենագետը գրում է ժամանակակից հայերենի, գրաբարի, միջին հայերենի և գրական արևմտահայերենի բառակապակցություններին նվիրված առանձին ուսումնասիրություններ, որոնք լույս են տեսնում առանձին գրքերով: Դրանք են՝ «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» (Երևան, 1975 թ.), «Գրաբարի բառակապակցությունները» (Երևան, 1980 թ.), «Միջին հայերենի բառակապակցությունները» (Երևան, 1984թ.), «Արևմտահայերենի բառակապակցությունները» (Երևան, 1986 թ.), ավելի քան 1250 էջ ընդհանուր ծավալով: Այնուհետև, 1990 թ. տպագրվում է մեծանուն լեզվաբան-քերականի «Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում» (Երևան, 1990 թ., 493 էջ) հիմնարար աշխատությունը, որն այլ բան չէր, քան նախորդ չորս մենագրությունների տեսական ընդհանրացումը: Ուստի անվարան կարելի է ասել, որ Վ. Քոսյանը հայերենագիտության մեջ մեկ ուրույն բնագավառի՝ բառակապակցության տեսական մշակողն ու կոնկրետ հետազոտողն է: Այդ բնագավառի գիտական տիրակալը նա է մեզանում, և երկար ժամանակ այդ մարզում հետագա ամեն մի մասնավոր ձեռնարկում անշրջանցելի ձևով բախվելու է մեծ ուսումնասիրողի առաջ քաշած դրույթներին, ինչպես նաև փաստական հիմնավոր վերլուծություններին:

Եթե համեմատելու լինենք «Ժամանակակից հայերենի բառակապակցությունների» տարբեր՝ գոյականական, ածականական, բայական և այլն կապակցությունների բաժինները «Գրաբարի բառակապակցությունները» գրքի նույնպիսի բաժինների հետ, ապա կնկատենք, որ հեղինակն այնտեղ էլ նույնպիսի խորությամբ ու պատասխանատվությամբ է քննում գրաբարի բառակապակցությունները, և այս դեպքում օրինակները բերվում են ինքնուրույն և թարգմանական (Աստվածաշնչի) գրականությունից բաղված համոզիչ և տեղին օրինակներով: Ուսումնասիրության այսպիսի որակն ու ծավալները վերաբերում են հիշյալ գրքերի գրեթե բոլոր բաժիններին:

Մեր կարծիքով՝ պրոֆ. Վ. Քոսյանը հայոց գրական լեզվի որ փուլի բառակապակցությունները առաջինը քննել, պիտի առաջնորդվեր ռուս և հայ լեզվաբանության նախկինում մեջ մշակված հստակ ըմբռումներով ու բացատ-

րություններով, քանի որ դրանք պետք է գործադրվեին լեզվի բոլոր փուլերի, ընդ որում նաև գրական աշխարհաբարի երկու տարբերակների բառակապակցությունների ուսումնասիրության ընթացքում: Ուստի արժանին պետք է ասել, պրոֆ. Վ. Քոսյանն իր ուսումնասիրությունների համար գիտական ճիշտ ելակետ է ընտրել, որի համար էլ ձեռք բերված արդյունքներն անկասելի են, գիտական շրջանառության մեջ՝ անխոցելի:

Հայերենի չորս գրական լեզուների բառակապակցությունների պատմական զարգացումները բնութագրվում են փաստական հարուստ նյութի վկայաբերմամբ, շարահյուսական կապակցման տարբեր եղանակների և միջոցների համաժամանակյա վերլուծությամբ և տիպական կառույցների առանձնացմամբ ու բնորոշմամբ: Պարզվում է, որ հայերենի գրեթե բոլոր փուլերում բառակապակցական կառույցների մեջ անհամեմատ մեծ տեղ ունեն գոյականական և բայական լրացյալներին հարող ձևացումները: Պարզվում է նաև, որ ակնհայտ փոփոխություններ են կատարվել բայի և ածականի խնդրառության հարցում, իսկ նախդրավոր և նախադրությամբ լրացումներն իրենց տեղը զիջել են աննախդիր և ոչ նախադրությամբ կառույցներին, ինչպես նաև շարահասական տեղաշարժեր են արձանագրվել լրացական կառույցներում: Համաժամանակյա քննությամբ ավելի որոշակի են դարձել մի կողմից՝ հայերենի տարբեր փուլերում գործածվող և կենսունակությամբ աչքի ընկնող կառույցների, մյուս կողմից՝ գործածությունից դուրս մնացած, լուրջ փոփոխությունների ենթարկված կամ նոր ձևավորվող բառակապակցական կաղապարները:

Հատկանշական է, որ բառակապակցությունների տեսության մշակումն ըստ հայերենի զարգացման փուլերի Վ. Քոսյանն սկսել էր կատարել ոչ թե գրաբարից աշխարհաբարին անցնելու ուղիով, այլ հակառակը՝ նախ մշակել թեմայի ամբողջական ուսումնասիրության սկզբունքները և ճշգրտել առարկային վերաբերող խնդիրները, այնուհետև ձեռնամուխ է եղել ժամանակակից հայոց լեզվի բառակապակցությունների քննությանը, իսկ հետագայում այդ մույն սկզբունքներով ուսումնասիրել է գրական հայերենի մյուս տարբերակների՝ գրաբարի, միջին հայերենի և արևմտահայերենի համապատասխան իրողությունները:

Հայերեն գրական լեզուների բառակապակցությունների պատմական զարգացումները բնութագրվում են գործածված և նոր վկայված փաստերով: Պարզվում է, որ ակնհայտ փոփոխություններ են կատարվել բայի և ածականի խնդրառության հարցում, նախդրավոր և նախադրությամբ լրացումներն իրենց տեղը զիջել են աննախդիր և ոչ նախդրությամբ կառույցներին, լրացական կապակցություններում շարադասական որոշակի տեղաշարժեր են արձանագրվել:

Բառակապակցությունների տեսական ուսումնասիրության տեսակետից բավականին ուշագրավ է անվանի լեզվաբանի մեկ այլ աշխատությունը՝ նվիրված նախադասության ակտուալ անդամատմանը, այն է՝ շարահյուսության ստորոգական նվազագույն միավորի՝ նախադասության անմիջական բաղադրիչների տեսությանը, որը քննարկվում է հայերենի տվյալների օգտագործմամբ:

Բառակապակցությունների համաժամանակյա քննությամբ ավելի որոշա-

կի են դարձել հայերենի տարբեր փուլերում գործածված և իրենց կենսունակությունը պահպանած, ինչպես նաև գործածությունից դուրս մղված, լուրջ փոփոխությունների ենթարկված կամ նոր ձևավորված բառակապակցական կաղապարները:

Իսկ դասախոսական աշխատանքի տարիներին անվանի հայերենագետը տարբեր առիթներով շփվելիս է եղել հայագիտության անվանի դեմքերի հետ ոչ միայն պաշտոնական իրադրության մեջ, այլև սովորական պայմաններում: Եվ նման շփումների մի նշույլ է նրա հեղինակած «Մեծերի հետ» փոքրիկ գրքույկը, որում հուշերի ձևով խոսվում է Գ. Ղափանցյանի, Ա. Ղարիբյանի, Ա. Աբրահամյանի և ուրիշների մասին՝ բացելով մարդկային հատկությունների, բնավորությունների, գիտական նվիրումի և այլ հետաքրքրական գծեր ու երանգներ:

Նա արդարամիտ էր, հաստատական ու սկզբունքային: Նրա համար սրբություններ էին ընտանիքը, երեխաները, եղբայրները, հայրենիքը: Իսկ խոշոր լեզվաբանները նրա համար օրինակ էին, և խոր ակնածանքով էր խոսում Դ.Աճառյանի, Գ.Ղափանցյանի, Ստ. Մալխասյանի, Մ.Աբեղյանի և այլ մեծերի մասին: Նա ինքն էլ մեծի անուն վաստակեց, և արդարացիորեն պետք է նկատել, որ Վ.Քոսյանն իր արժանի տեղն ունի մեր ժամանակի անվանի լեզվաբանների մեջ: Նրա անունն ու գիտական պատկառելի վաստակը դեռ երկար են մնալու հայերենագիտության անդաստանում:

Պրոֆ. Վաղարշակ Քոսյանի ծննդյան 80-ամյակի առիթով խոնարհվում ենք նրա վաստակի առջև:

Էդուարդ Մկրտչյան
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր